

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Աուդիտ Սթար» ՍՊԸ

Բուսաբանական փ. 14, Երևան, Հայաստան

Հեռ: +37410297229, 091423313, 091202304

Ֆաքս +37410200918

auditstar@mail.com

www.auditstar.am

Աուդիտորական գործունեության լիցենզիա 015 տրված
ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից
27.12.2002թ

“Նորավանք” գիտակրթական հիմնադրամի հոգեբարձուների խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի (այսուհետ՝ «հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2014թ., նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև՝ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ պարզաբանող ծանոթագրությունները:

Հիմնադրամի ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման եվ ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորների պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է բավարարել բարոյական վարքի կանոնները, պլանավորել և անցկացնել աուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

“Նորավանք” գիտակրթական հիմնադրամ
 առ 31.12.2014թ.

Հազար դրամ	Ծնթ.	Առ 31 դեկտեմբերի 2014թ	Առ 31 դեկտեմբերի 2013թ
Ակտիվներ			
<i>նթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	209329	222981
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		209329	222981
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	5	357	339
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	477	1315
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	3909	3439
Ընթացիկ ակտիվներ հարկերի գծով		-	-
Դեբիտորական պարտքեր աշխատակիցների հատուցումների գծով		-	-
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		4743	5093
Ընդամենը ակտիվներ		214072	228074
Պահուստներ և պարտավորություններ			
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Ակտիվներին վերաբերվող շնորհներ	8	209329	222981
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		209329	222981
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9	650	680
Եկամուտներին վերաբերվող շնորհներ	10	4054	4169
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	11	39	94
Կրեդիտորական պարտքեր աշխատանքի վճարման գծով			150

Ընդամենը ընթացիկ պարտավորություններ
Ընդամենը պահուստներ և պարտավորություններ

4743

5093

214072

228074

Ֆինանսական հաշվետվությունները հաստատված են 2014թ. հունվարի 30- ին:

Գազիկ Հարությունյան




Տնօրեն



Հերմինե Բարսեղյան

Գլխավոր հաշվապահ



Հաշվապահական Հաշվեկշիռը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող Ծանոթագրությունների հետ մեկտեղ, որոնք ներկայացված են 12-25 էջերում: